

ԹԵԳԱՐԱՄԱ (ԹՈԳԱՐՄԱ) ՔԱՂԱՔԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ Ա. Հ.

Ըստ առ այսօր կատարված ուսումնասիրությունների՝ Թեգարամա քաղաքը առաջին անգամ հիշատակվել է Աշշուրի «կապադոկիական աղյուսակներում» (մ.թ.ա. XX-XVIII դդ.), իսկ մ.թ.ա. XVI դ. սկսած՝ խեթական աղբյուրներում¹: Ընդ որում, «Թեգարամա երկիրը նույնացվում է բիբլիական Թոգարմայի հետ («Աստվածաշնչի» հայերեն թարգմանության մեջ՝ «Տուն Թորգոմայ»), որը հիշատակվում է մ.թ.ա. 593 թվականով: Հայ պատմական ավանդության մեջ «Թորգոմայ տունը» համարվում է Հայաստանի հոմանիշ, իսկ հայերը անվանվում են «Թորգոմեան», «Թորգոմածին»²: Խեթական արձանագրությունների հիշատակություններից երևում է, որ Թեգարամա քաղաքը գտնվել է Վերին Եփրատի հովտում, գետի աջ ափին³: Հարկ է նշել, որ բոլոր մասնագետները «համաձայն են Թեգարաման Մելիտենի արևմուտքում տեղադրելու և Գաուրաինայի (ար-դի Գորունի) հետ նույնացնելու հարցում»⁴: Սակայն այդ տեսակետը վերանայման կարիք ունի, որովհետև ըստ նոր կողմնորոշման՝ «Թեգարաման գտնվել է Մալաթիայից անմիջապես հյուսիս՝ Եփրատի աջ ափին»⁵: Հարցի ուսումնասիրության տեսանկյունից հատկապես կարևոր է Մուրսիլ II-ի (մ.թ.ա. 1345-1320 թթ.) Տարեգրության մեջ նշված խեթական թագավորի գահակալության իններորդ տարում տեղի ունեցած ռազմական գործողությունների դիտարկումը⁶:

¹ Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, Ե., 1998, էջ 7, ծան. 9:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 195-196: Անձնանունը բխեցվում է եբրայերեն Thorgama ձևից, որի ճիշտ ընթերցումն է համարվում Togarma-ն: Ըստ դրա՝ հունարեն տառադարձվել է θοργαμά, θεργαμά, θοργομά. իսկ հայերեն՝ Թորգոմա, որից էլ Թորգոմ (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Ե., 1944, էջ 343): Ասուրա-բաբելական աղբյուրների Til-garimmu տեղանունը ոչ մի կապ չունի Togarma, Thorgama անվանաձևերի հետ՝ ինչպես կարծում են որոշ հետազոտողներ: Լեզվական առումով դրանք տարբեր անվանումներ են:

³ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 48, Аветисян Г. М. Государство Митанни, Е., 1984, с. 59-60.

⁴ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 42:

⁵ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում (Հայոց հին պատմություն) Ե., 1998, էջ 54, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Ե., 2007, էջ 80: Ենթադրվում է, որ «Մալաթիայի Melite(յ)ա անվան մեջ... առկա է հ.-ե. *melit-, խեթ. milit-» մեղր» (Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Մարգարյան Գ. Խ., Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, էջ 154, ծան. 51):

⁶ «Լրիվ ժամանակագրության համաձայն, թագավորը Կարգամիշից պետք է եկած լիներ ուղղակի Թեգարամա, սակայն Տասնամյա ժամանակագրությունը ցույց է տալիս, որ նա Կիզգուվատնայից և ոչ թե Թեգարամայից էր մտադրվել գնալ Հայասա կամ Ազգի երկրի դեմ: Եթե առաջին վավերագրում Կիզգուվատնա անունը պարզապես մոռացված չէ, ապա պետք է ենթադրել, որ Թեգարաման Կիզգուվատնայի մի կետն է» (Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 41, ծան. 1):

Ըստ ժամանակագրության՝ հայասացիներն ավերում են Բշտիտինա մարզը և պաշարում Կանաուվարա քաղաքը⁷։ Թագավորի հրամանով Վերին երկրում բանակած խեթական զորքերը օգնության են հասնում պաշարված քաղաքին և պարտության մատնում հակառակորդին։ Այդ ընթացքում Մուրսիլ II-ը, որը գտնվում էր Կիզզուվատնա երկրում, մեկնում է Կարքեմիշ։ Գործերը կարգավորելուց հետո նա վերադառնում է Կիզզուվատնա՝ կանգ առնելով Թեգարամայում։ Բանակի հրամանատար Նուվանգան իր զորքերով նույնպես ժամանում է Թեգարամա։ Սակայն արշավանքը դեպի Հայասա հետաձգվում է։ Մուրսիլ II-ն իր զորքերով մեկնում է Խարրանա⁸։

Տարեգրության մեջ թվարկված երկրների տեղադրությունը թույլ է տալիս գծել Մուրսիլ II-ի երթուղին՝ Կարքեմիշից Խարրանա երկիր ընկած հատվածում, ինչպես նաև ճշգրտել Թեգարամա քաղաքի գտնվելու վայրը։ Այսպես, Կարքեմիշից խեթական թագավորը բարձրացել է Եփրատի հոսանքի հակառակ ուղղությամբ մինչև Զելվմայի գետանցը, որը կապում էր Ասորիքը Միջագետքի հետ։ Այստեղից անցել է գետի ձախ ափը և շարունակել ճանապարհը մինչև Տոմիսայի (Թմնիս)⁹ գետանցը։ Այս անցել է Եփրատի աջ ափը և շարժվելով դեպի հյուսիս՝ շրջանցել է Մելիդն արևելքից և հասել Թեգարամա, իսկ այնուհետև մեկնել Խարրանա երկիր։

Ժամանակագրության հաղորդումից երևում է, որ գորավար Նուվանգայի բանակը մուտք էր գործել Թեգարամա Բշտիտինա մարզից։ Հետևաբար, անժխտելի է, որ Թեգարաման գտնվում էր Մելիդի և Բշտիտինայի միջև։ Ավելին, Ասարխադդոնի (մ.թ.ա. 681-670 թթ.) Շամաշ աստծուն ուղղված հարցումներից պարզվում է, որ Մելիդը և Թեգարաման եղել են հարևան երկրներ, և Մելիդն ընդգրկված էր

⁷ Այս քաղաքը նույնացվում է Էրզրումի շրջանում գտնվող միջնադարյան հայկական Կան բնակավայրի հետ (Խաչատրյան Վ., նշվ. աշխ., էջ 36)։ Բշտիտինա մարզը տեղորոշվում է Տերիկ գետի ստորին հոսանքի աջափնյա շրջանում։ Գետի ստորին հոսանքի ձախափնյա մասում գտնվում էր Խաթթուշայի սեպագիր արձանագրություններում վկայված Զիմուրրիան, ինչպես նաև խեթերեն գրված քարակոթողի բեկորների վրա հիշատակվող Կասմիյախա քաղաքը [մանրամասն տե՛ս Մարտիրոսյան Ն., Պրպտումներ փոքրասիական անուններու մասին (Պատմաբանասիրական հանդես, 1961, N 3-4, էջ 97-98, 105)]:

⁸ Խարրանա երկիրը գտնվում էր Տերիկ գետի վերնագավառում (տե՛ս Ադունց Ն., նշվ. աշխ., էջ 42-43)։

⁹ Երենյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, տե՛ս քարտեզը։ Կանեշ-Աշշուր ատևորական մայրուղու վրա առաջացած քաղաք-պետություններից «Մալդիան (Մելիդ, Մելիտեա, անտիկ Melitiane, այժմ՝ Էսկի-Մալաթիա), գտնվում էր Եփրատի գլխավոր գետանցի Ուրշա կամ Ուրուսա (Պատինգերյան քարտեզի ad Aras, այժմ՝ Փորուտ գյուղից ոչ հեռու գտնվող) քաղաքի մոտ։ Եփրատի դիմացի ափին էր գետանցի մյուս ծայրը՝ Տումեիշկի քաղաքը, որը հետագայում հայտնի էր ուրարտական աղբյուրներից» (այժմ՝ Բզովու գյուղը, անտիկ դարաշրջանի Տոմիսան) (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 196)։

Թեգարամա քաղաք-պետության կազմի մեջ¹⁰:

Հստ ամենայնի՝ Թեգարաման գտնվում էր Վերին Եփրատի աջակողմյան վտակ Կառամինոնի գետաբերանի շրջանում, Եփրատի աջ ափով ձգվող և Սեբաստիայից Խարրանա երկրով, Կառամինոն գետի հովտով անցնող ճանապարհների հանգուցակետում:

Ակներն է, որ Թեգարաման կարևոր ռազմական հենակետ էր Անդրեփրատյան գոտում, որտեղից խեթական թագավորներն արշավանքներ էին կատարում դեպի Հայասա-Ազգի, Ասորիք և Միջագետք: Անդրեփրատյան տարածաշրջանի նվաճումը տեղի է ունեցել մ.թ.ա. XVII դ. կամ XVI դ. սկզբին, երբ խեթական թագավորները ջանում էին նվաճել Ասորիքը և Բաբելոնը¹¹: Բնականաբար, արշավանքը նախապատրաստելու համար նրանք պետք է պետության սահմաններն արևելքում հասցնեին առնվազն մինչև Եփրատ՝ ձգտելով իրենց վերահսկողության տակ վերցնել գետի հովտով անցնող ճանապարհը և Եփրատի մեծ աղեղի գետանցները, որոնք բաժանում էին Ասորիքը Միջագետքից: Մինչև Եփրատի գլխավոր գետանցն ընկած Կիզզուվատնա երկիրը, որի մեջ ընդգրկված էին Թեգարաման, Մելիդը և Թաբալը¹², կարևոր ռազմավարչական շրջան էր այդ ծրագիրն իրականացնելու համար: Սակայն խեթական տիրապետությունն Անդրեփրատյան գոտում հաստատուն չէր: Տեղական բնակչության ընդվզումներն արձագանք էին գտնում Հայասա-Ազգի թագավորությունում¹³, որը, անշուշտ, պայմանավորված էր տարածաշրջանի բնակիչների ցեղակցությամբ, ինչպես նաև Անդրեփրատյան գոտու՝ ավելի վաղ ժամանակներում Հայասա-Ազգի թագավորության կազմի մեջ լինելու իրողությամբ¹⁴:

Հարցի առնչությամբ կարևորվում է Թեգարամա կամ Թոգարմա անվան ստուգաբանությունը: Նկատենք, որ տեղանվան երկրորդ մասի արամա-արմա տարբերակները նույն արմատի տարբեր դրսևորումներն են: Նրանց մեջ կարելի է տեսնել Արամ անունը: Այսինքն՝ տեղանվան նախնական ձևն է *Թեգ/Թոգ Արամա: Նկատենք, որ թեգ-թոգ բաղադրիչը հայերենում երևան է գալիս սերմ, զարմ, տոհմ

¹⁰ «Թեգարամայի թագավոր Մուգալլուն իսկ էր Միլիդ (Մելիտենե) քաղաքը, իսկ Բշկալլուն վերականգնել էր Թաբալի թագավորությունը: Ապա նրանք դաշնակցել էին՝ Բշտիարու քաղաքին տիրանալու համար: Ասարխադդոնը իր զորապետ Շանաբուշուին ուղարկում է քաղաքին օգնելու և Շամաշին հարցնում է, թե հաղթանակ տանելո՞ւ է, թե ոչ: Դա նրան չի հաջողվում» (տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 136):

¹¹ История древнего мира. Древний Восток, Египет, Шумер, Вавилон, Западная Азия, Минск, 1999, с. 465.

¹² Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 50:

¹³ Ն. Ադոնցն այդ կապակցությամբ գրում է. «Կիզվատնայի դավաճանությունը վարակեց նաև Բշուվային: Հնարավոր չէ որոշել, թե այս քաղաքական միասնությունն արդյոք ներշնչված էր ցեղակցությամբ, թե՛ Խաթթիի դեմ դիսակայությամբ» (Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 50):

¹⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 192-193:

ձևերով¹⁵: Այն մատնանշել է նաև բնակության շրջան՝ տուն կամ երկիր¹⁶: Հետևաբար, տեղանունը նշանակել է Արամի տուն կամ Արամի երկիր: Անհրաժեշտ է նաև նշել, որ թեզ-թոզ բառի իմաստը կրկնվել է երբայերենում՝ Bet Togarma¹⁷:

Ուշագրավ մի փաստ նս. Թուդխալիյա III-ի (մ.թ.ա. 1410- 1380 թթ.) օրոք Խաթթիի դեմ ապստամբած երկրների թվում հիշատակվել է նաև Արմատանա երկիրը¹⁸, որի անունը նույալես արտահայտում է Արամի տուն կամ Արամի երկիր գաղափարը¹⁹:

Թվում է, թե Նարամ-Սուենի մի արձանագրության մեջ վկայված A-ra-am(=Aram)²⁰ և Էբլայի արձանագրություններում հիշատակվող Arramu²¹ անվանաձևերը վերաբերում են միևնույն տեղանվանը, որն Arime ձևով հանդես է գալիս որպես երկրանուն Ադադներարի II-ի (մ.թ.ա. 911-891 թթ.) արձանագրության մեջ²²: Ըստ տեղանվանական տվյալների՝ Arime(=Aram) երկիրն ընդգրկում էր Կաշիարի լեռների և Արմատյան Տիգրիսի միջև ընկած տարածաշրջանը²³:

Ուշադրության է արժանի Նարամ-Սուենի (մոտ մ.թ.ա. 2238- 2202 թթ.) դեպի Սիմուրրում երկիր կատարած արշավանքի, Սիմուրրումի և Արամ երկրի կառավարիչների գերեվարվելու մասին պատմող արձանագրությունը²⁴, որը փաստում է Վանա և Ուրմիա լճերի միջնատարածքի հարավում մեկ այլ Արամ երկրի գոյության մասին: Այն համադրելի է Աշշուրից գտնված խաթա-խեթական երկլեզվյան արձանագրության Ուրամեի (մ.թ.ա. III-II հազ.) և հինբաբելոնյան

¹⁵ Մարտիրոսյան Ն., նշվ. աշխ., էջ 102:

¹⁶ Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 6:

¹⁷ Գավուքճեան Մ. Ս., Արմեն եւ հայ անունների ծագումը եւ Ուրարտուն, Պէրոյթ, 1973, էջ 147: Արամ անվան սեմական լինելու մասին կարծիքները հաստատուն որևէ հիմք չունեն (մանրամասն տե՛ս Գավուքճեան Մ. Ս., Ուսումնասիրություններ հայոց հնագոյն պատմութեան, Ե., 2010, էջ 180-182, 188):

¹⁸ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 47-48:

¹⁹ Հակոբ Կարնեցին Արմատաններ անունով գավառակ հիշատակում է Կա- մախի շրջանում [տե՛ս Հակոբյան Վ. Ա., Մանր ժամանակագրություններ (13-18-րդ դդ.), Ե., 1956, հ. II, էջ 552]: Տեղորոշվում է Բարձր Հայքի Ադուն գավառի սահմաններում՝ Կամախից ոչ հեռու գտնվող Արմտան գյուղի շրջանում (Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի, Ե., 1963, էջ 40, տե՛ս նաև քարտեզը): Մուպալիդուլումայի արձանագրության մեջ Թեգարամա և Արմատանա երկրների միջև հիշատակվում են Թեպուրգա և Խասգա բնակավայրերը (տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 47, 48), որոնք համապատասխանաբար տեղորոշվում են Արաբկիրի շրջանում:

²⁰ Callaghan R. T. O'. Aram Naharaim, Roma, 1948, p. 96.

²¹ Pettinato C. The Archives of Ebla, New York, 1981, p. 84.

²² Luckenbill D. D. Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, 1927, p. 119-121.

²³ Մ. Գավուքճյանի կարծիքով՝ «...Նարամ-Սինի յիշած Ar-am (կամ Ara-am) քաղաքը Արմանիի շրջանի քաղաքներից մեկն էր, հաւանաբար, Հայկական Տարոսի շրջանում» (Գավուքճեան Մ., Ուսումնասիրություններ հայոց հնագոյն պատմութեան, էջ 183):

²⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. I, էջ 59-60:

աղբյուրների Արամուի հետ, որը կազմել է Սուբարտուի մասը²⁵:

Հարցի առնչությամբ կարևորվում են նաև Ասորեստանի թագավոր Սալմանասար I-ի (մ.թ.ա. 1280-1261 թթ.) արձանագրության մեջ Ուրուատրիի²⁶ 8 մարզերի գրավման, Արինա քաղաքի կործանման և Սուծրու երկրի նվաճման մասին տեղեկությունները: Արձանագրության տեքստում հիշատակվում է նաև կուտիների պարտությունը՝ Ուրուատրիի սահմաններից մինչև Կուտմուխ երկիրն ընկած տարածքում²⁷: Ակնհայտ է, որ արձանագրության մեջ խոսվում է Ասորեստանին սահմանամերձ տարածքի մասին²⁸: Փաստերի դիտարկումից երևում է, որ Ուրուատրի երկրի մեջ ընդգրկված են եղել Վանա լճից²⁹ հարավ և հարավ-արևելք ընկած շրջանները³⁰, սակայն անհայտ է, թե որքան հեռու էին տարածվում նրա սահմանները մյուս ուղղություններով: Ամենայն հավանականությամբ, Ուրուատրիի կազմի մեջ մտնում էր նաև Տիգրիսի և նրա ձախակողմյան վտակ Արնեյան Տիգրիսի միախառնման վայրից արևելք ընկած բնաշխարհագրական շրջանը՝ Խաբիսի երկիրը, որտեղ ըստ Ասորեստանի թագավոր Աշշուրնասիրապալ II-ի (մ.թ.ա. 884/3-859 թթ.) տարեգրության՝ գտնվել է

²⁵ Նույն տեղում, էջ 60, ծան. 2:

²⁶ Հստ Բ. Դյակոնովի՝ «Ուրուատրիի տերմինը այստեղ պետք է հասկանալ որպես ցեղերի անվանում: Այդ բառից առաջ կանգնած «երկրի» դետերմինատիվը միանգամայն սովորական է նման դեպքերում» (Дьяконов И. М. Ассииро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВНИУ) (Вестник древней истории, 1951, N 2, с. 267, прим. 6).

²⁷ АВНИУ, с. 266.

²⁸ Բ. Պիոտրովսկին հավանական է համարում, որ Սալմանասար I-ը գրավել է միայն Ուրուատրիի ցեղային միության հարավային մասի բնակավայրերը (տե՛ս **Пиотровский Б. Б.** Ванское царство, М., 1959, с. 44).

²⁹ Ուրարտուի ժամանակաշրջանում Վանա լիճը ունեցել է այլ ուրվագծեր: Ժամանակակից լճի տեղը գոյություն ունեին երկու ոչ մեծ լճեր: Առաջինը՝ Արտեռուսա-Արետուսա լիճը, որը տեղադրված էր Արճեշի ծովախորշի շրջանում, երկրորդը՝ Տոսպիտիս լիճը՝ Վանի իջույթի հարավարևելյան մասում: Վերջինիս ափին գտնվում էր Ուրարտուի մայրաքաղաք Վանը (**Балян С. П.** Новейшая история озер Севан и Ван (Вестник МГУ, серия географических наук, 1984, N 2, с. 64-65):

³⁰ **Пиотровский Б. Б.**, նշվ. աշխ., էջ 43: Ուրուատրիի երկրների տեղորոշման հարցում կան տարակարծություններ (տե՛ս **Пиотровский Б. Б.**, указ. соч., с. 44). Ավելի որոշակի է Գ. Մելիքիշվիլու տեղադրությունը՝ Մեծ Զար գետի միջին և վերին հոսանքների շրջանում (**Меликишвили Г. А.** Наирн-Урарту, Тбилиси, 1954, с. 20, 150-151). Այդ տարածաշրջանն է մատնանշում Սուծրու (Սուծածիր) երկրի տեղադրությունը (Մեծ Զարի վերին հոսանքի շրջանում, դեպի Ուրմիա լիճը տանող քարավանային ճանապարհին), որի կենտրոնն էր Արինա (իմա՝ Արդինի) քաղաքը (տե՛ս АВНИУ, с. 267, ծան. 9): Միննույն ժամանակ, Գ. Մելիքիշվիլին ենթադրում է, որ Ուրուատրիի տերմինով միավորված ցեղերի անունից առաջացել է Ուրարտու պետության անունը «...սահմանափակելով դրանով իսկ Ուրուատրի երկրների տարածքը ոչ մեծ շրջանով» (տե՛ս **Пиотровский Б. Б.**, նշվ. աշխ., էջ 44):

Արարտու (իմա՝ Արարադ) լեռը³¹: Տեղանվանական այս տվյալն օգնում է ճշգրտել Ուրուատրիի արևմտյան և հարավային սահմանները նաև մ.թ.ա. XIII դ. առաջին կեսի դրությամբ: Արարտու լեռնանվան կապը Ուրուատրի- Ուրարտու երկրանվան հետ ակնհայտ է, իսկ լեռան տեղադրությունը մատնանշում է այն տարածաշրջանը, որն ընդգրկված է եղել Ուրուատրիի կազմի մեջ:

Այսպիսով, մ.թ.ա. XIII դ. առաջին կեսի դրությամբ, Ուրուատրիի տարածքը ուրվագծվում է «Աշխարհացոյց»-ի Կորձայք նահանգի և Վասպուրականի Ադրակ գավառի սահմաններում:

Ի դեպ՝ «Ուրուատրի» (^{KUR}Uraṭri) տարբերակ՝ Ուրատրի (^{KUR}Uraṭri) երկրի անունը տրուած է աքքադերէնի քերականական օրէնքների համաձայն՝ ur(u) aṭri («հրոյ քաղաք», իմա՝ «հրոյ երկիր») ձևով³²: Սակայն «կրակը կոչվել է ըստ արևի»³³: Ընդ որում, «ավելի նյութականորեն է կապված արևի, հավասարապես արշալույսի հետ լույսը, օրը»³⁴: Հետևաբար, Ուրուատրի (Ուրատրի) երկրանունը նույնպես արտահայտել է Արևի (իմա՝ Արամի) երկիր իմաստը³⁵:

Արամ անվամբ երկրների տեղադրությունը, ինչպես նաև, Արմալիր (*Արամալիր՝ Արամի տոհմ, ցեղ³⁶ կամ Արև աստծո սերունդ), Արամալե/Armari(ja)li/Armiralia/u/Armarili երկրանվան [«արևորդիների (զորքի արտոնյալ մասը կազմող զինվորականության) բնակության վայրը»] և նրա մեջ արտացոլված հայերեն Զարմայր անձնանվան (արքայական տոհմի սերմ հանդիսացող մարդու անվանում)³⁷ ստուգաբանությունը բերում է այն

³¹ Արձանագրության մեջ լեռան անունը տրված է Արարդի տարբերակով, սակայն «հնարավոր է նաև Արարտի ընթերցումը («Արարտու»-ի սեռական հոլովը)» (АВВНУ, с. 285, прим. 12).

³² Կարագեոզեան Հովհ., Սեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 14: Ի դեպ՝ Հուրը համարվում է բնիկ հայերեն բառ՝ հ.-ե. նախալեզվի poro-ձևից (Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 125):

³³ Март Н. Я. Избранные работы, т. V, М.-Л., 1935, с. 231.

³⁴ Նույն տեղում, էջ 144: Ըստ Ղ. Ալիշանի՝ «...Ար արմատն՝ ձայնիւ լծորդ է Աւր (օր) և Հուր բառից» (Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վ. 1895, էջ 85):

³⁵ Համանման կարծիք հայտնել է Մ. Գալուքճյանը. «Արմանի (կամ Արմենի), Նաիրի եւ Ուրարտու անունները նույն երկրին տրուած նոյնանիշ ու համագօր անուններ էին: Տարբերութիւնն այն էր, որ Արմանի կամ Արմենի նշանակում էր «արեւորդիների երկիր» իսկ Նաիրի եւ Ուրարտու նշանակում էին «վայր կրակի», երկիր արևու-կրակի» (Գալուքճեան Մ. Ս., Հայ ժողովրդի ծագումը, Սոնթրէալ, 1980, էջ 58-59):

³⁶ Ղարազյոզյան Ա., Գեղամա երկիր, Ե., 2004, էջ 27-28: Հավանական է, որ Արմալիրը հիմնադրվել է շատ ավելի վաղ ժամանակներում (մ.թ.ա. III հազ. վերջերին)՝ նախքան Արգիշթե I-ի կողմից Արգիշթեիսինել բերդի հիմնադրումը (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Ե., 1986, էջ 467):

³⁷ Ղարազյոզյան Ա., նշվ. աշխ., էջ 28-29: Նկատենք, որ տոհմական հասարակության ժամանակի տերմինաբանությունից հայերենում պահպանված «Զարմ բառը, որ նշանակում է «ցեղ, սերունդ», ստացել է...որոշ երանգավորում իբրև լավ ցեղ կամ տոհմ, երբ դրսևորվել է տոհմի մեջ բարձր իշխող խավը» (Ղափանցյան Գ. Ս., Հայոց լեզվի պատմություն (Հին շրջան) Ե., 1961, էջ 54:

եզրահանգման, որ դրանք եղել են մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսի աքքադական սեպագիր աղբյուրներում հիշատակվող Արման(ի/ում)³⁸ երկրի սահմանապահ իշխանություններ՝ կուսակալություններ, որոնց կառավարիչները՝ ռազմական վերնախավի ներկայացուցիչները (այդ թվում՝ տոհմերի և ցեղերի առաջնորդները, որոնք ըստ էության պատկանում էին թագավորական ցեղին)³⁹ իրականացնում էին իրենց վստահված շրջանների կառավարումը, որոնք, փաստորեն, գտնվում էին երկրի չորս կողմերում՝ հյուսիսում, հարավում, արևմուտքում և արևելքում⁴⁰։ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող լեռնանցքների պահապան առասպելական էակների մասին տվյալներ կան շումերական «Գիլգամեշ» դյուցազնավեպում (մ.թ.ա. III հազ. սկիզբ)⁴¹։

³⁸ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. 1, էջ 51, 56։ Հիշատակելի է, որ Արման (ի/ում) երկրի տեղորոշման հարցում կան տարակարծություններ (տե՛ս [www.wikipedia.org/wiki/ Арманум](http://www.wikipedia.org/wiki/Арманум))։

³⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 222, Грантовский Э. А. Индо-иранские касты у скифов, М., 1960, с. 5. Հետաքրքրական է, որ հայերեն ավանդված *արմա բառը նշանակել է նաև զինանշան։ Ըստ Հ. Աճառյանի՝ /*արմա («= իտալ. arma «զինանշան», որ ծագում է լատ. Arma «զենք» բառից» (Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 327-328)։ Նկատի ունենալով այդ բառի զուգահեռները հայերեն և հնդեվրոպական մյուս լեզուներում՝ կարելի է ենթադրել, որ այդ ձևը գալիս է հնդեվրոպական նախալեզվից։

⁴⁰ Սպեր գավառի Արամանեակ բերդանվան (Թովմայի վարդապետի Արծրունու Պատմություն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 315) և Թե/ոգարամա, Արմատանա երկրանունների միջև եղած կապը, ինչպես նաև ավանդական Վաղարշակ թագավորի կողմից կուսակալ նշանակելու մասին հիշատակությունը (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Ե., 1991, էջ 105) բացահայտում են հնագույն շրջանում Ճորոխի ավազանում մեկ այլ կուսակալության առկայությունը։ Վաղ միջնադարում այդ «կողմնակալության խնդիրն էր պաշտպանել երկրի Արևմտյան դուռը։ Նրա կազմում ընդգրկված էին Մեծ Հայքի արևմտյան հատվածի ավատատերերի զինական ուժերը» (Ղաթադյոզյան Ա., Ժողովրդական տեղաշարժերը Հայաստանում մ.թ.ա. II- մ.թ. XVդդ., Ե., 2004, էջ 22)։ Արտաշատ-Սատաղ ուղեգծի Armanas կայանը, որը նշված է Պետինգերյան քարտեզում և համապատասխանում է հին Հայաստանի Արամանա գյուղին (տե՛ս Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Ե., 1936, էջ 53, ծան. 1), գտնվում էր Բագրևանդ գավառում (Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904, էջ 57-58)։ Այդ բնակավայրի տեղադրությունը պատկերացում է տալիս երկրի կենտրոնական մասում գտնվող ևս մեկ կուսակալության մասին։ Հիշատակելի է, որ Vդ. Բագրևանդին մերձակա Ծաղկանց լեռների գոտին՝ Ծաղկոտն գավառը, եղել է հայկական գործի բանակատեղի (Ղազար Փարպեցի, էջ 60, 132)։

⁴¹ «Երբ Մաշու սարին ստորոտներուն հասավ, երկու-կարիճ մարդու հանդիպեցավ, որոնք ամեն օր արևին ելքին և մուտքին կը հսկեին։ Այդ երկու լեռներուն կատարին վրա կը հանգչի երկնականարը, անոնց վարի ներքնամասը մինչև դժոխքին խորքը կը հասնի։ Լեռան դուռը պահակ կեցած էին ահավոր կերպարանքով կարիճ-մարդիկ, որոնք լեռան ոտքեն մինչև գլուխը սարսափ և մահ կը սփռեին, ու կը հսկեին արևածագեն մինչև արևմուտ» (Գիլգամեշ, Հին Արևելքի դյուցազնավեպ, թարգմանությունը և ներածականը Նշան Մարտիրոսյանի, Ե., 1963, էջ 74)։ Ս. Պետրոսյանի բնորոշմամբ՝

Այսպիսով, պետք է արձանագրել, որ միջնադարյան հայ հեղինակների կողմից հայության ընկալումը՝ որպես Արամանեայն, Արամանեան, Արամագենայ, Արամագեան ազգ ունի որոշակի պատմական հիմք⁴²: Անկասկած, Վիրքի կենտրոն հանդիսացող Մցխեթի նշանակալից բերդերից մեկի հնագույն Արմազի⁴³ անունն արտահայտում է Արամի տուն իմաստը⁴⁴, որն իր հերթին վկայում է Հայկական լեռնաշխարհից անմիջապես հյուսիս գտնվող ավելի վաղ ժամանակներում գոյություն ունեցած մեկ այլ կուսակալության մասին⁴⁵: Այս կապակցությամբ նշենք, որ Փոքր Ասիայում և նրանից արևելք գտնվող երկրներում գործածվել է bir/ber տուն> տոհմ անունը, որը հայերենի կենդանի լեզվում (իշխող բարբառում) դարձել է վեր կամ վեր (սեռ. հոլ. վերի կամ վերի)⁴⁶, որից էլ («ք» հոգնակերտ տեղանվանակերտ ցուցիչ-ածանցով) առաջացել է Վիրք տեղանունը՝ նշանակելով /Արամի/տոհմի, ցեղի երկիր⁴⁷:

«...թյուրիմացաբար «կարիճ-մարդիկ» համարված էակները Հայկական լեռնաշխարհի՝ «Արևի երկրի», «Դրախտավայրի» պահապան կորճ-մարդիկ//անգղ-մարդիկ ըմբռնված առասպելական էակներն են եղել» (Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 89):

⁴² Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Ե., 1942, էջ 267: Ս. Պետրոսյանի կարծիքով, «Արամը եղել է ուրարտական թագավորների գահանունը, որից էլ կազմվել է նրանց *Արամագն(>Արամագենայք)հայ» տոհմանունը» (Պետրոսյան Ս., նշվ. աշխ., էջ 54):

⁴³ Այդ անվանաձևը հիշեցնում է Զվարթնոցի սեպագիր արձանագրության անեծքի բանաձևի մեջ հանդիպող *Armuzi* բառը (տե՛ս Ղափանցյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 54):

⁴⁴ Գ. Մելիքիշվիլու կարծիքով, Մցխեթի երկու նշանակալից բերդերը կրել են խեթա-փոքրասիական աստվածություններ Արմազի(Արմաս) և Զադենի (Սանդոն, Սանթաշ) անունները, որը խոսում է Փոքր Ասիայի արևելյան շրջաններից այստեղ ներթափանցած մուշկեր-մեսսիների՝ խեթա-փոքրասիական մշակութային-կրոնական ավանդույթներ կրողների խաղաղացած դերի մասին (Меликишвили Г. А. История древней Грузии, Тбилиси, 1959, с. 287): Սակայն առ այսօր «...մուշկերի էթնիկական պատկանելության և բնակության վայրերի հարցերը պարզ չեն» (Ջախուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987, էջ 288):

⁴⁵ Մցխեթում «կատարված հնագիտական պեղումներով (1870, 1937) հայտնաբերվել են ամրացված նստավայրերի, քաղաքային թաղամասերի, ինչպես նաև հին գերեզմանոցների (Սամթավրոյի գերեզմանաթմբեր, մ.թ.ա II– I հազարամյակ) մնացորդներ, որոնք վկայում են այդ տարածքում վաղ ժամանակներից (էնեոլիթ) նստակյաց բնակչության մասին: Հայտնաբերվել են նաև Արմազի միջնաբերդի (մ.թ.ա. I հազարամյակի 2-րդ կես – մ.թ. I հազարամյակի սկիզբ) ավերակները» (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 8, Ե., 1982, էջ 71-72):

⁴⁶ Ղափանցյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 52-53:

⁴⁷ Նկատենք, որ *beri*(bir/ber) բառը վերապրուկային ձևով մնացել է վրացերենում «ծերուկ» իմաստով՝ մատնանշելով տոհմավագին: Ընդ որում, «Մինչև իսկ ռազմական դեկավարության համար ընտրվող, իսկ հետագայում ժառանգական առաջնորդը՝ թագավորը կրում էր այդ նույն տոհմանունը կամ ցեղանունը» (Ղափանցյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 52): Ի դեպ՝ «Բ. անվան առաջացումը վարկածվել է (Գ. Մելիքիշվիլի) հայկ. «Վիրք» [«Ի վիրք» (կամ «Վերք»), «Իվերք»] ձևից, որն առնչվում է քարթվելական «սվեր» կամ «սվիր» ցեղանվան հետ («ս» նախածանցով և «վեր» կամ «վիր» արմատով): Ցեղանվան «Մբեր» տարբերակից բխեցվել է (Բ. Զավախիշվիլի) «Հբեր»-ը (այստեղից էլ՝ «Բ.»), որի կողքին պետք է լինի «Հվեր» (այստեղից էլ՝ հայկ. «Վեր»-ը և «Վիր»-ը): Մինչև մ.թ.ա. III–II դդ. Բապանիան ևս կոչվել է Բ. և անունների նմանությունից հույն ու լատին հեղինակները ենթադրել են, որ Կովկասի իբերները, այսինքն՝ վրացիները, առաջացել են Պիրենեյան թերակղզու իբերներից: XIX դարից սկսած՝ առանց

Այն՝ որպես բնաշխարհագրական շրջան, տարածականորեն պետք է համապատասխաներ Ստրաբոնի հիշատակած Բրեթիային⁴⁸: Այդ իրողությունն արտացոլում է գտել նաև հավաքական կերպար հանդիսացող Քաջ Արամի (Aram / Eram hutu)՝ թշնամիների վրա խիզախ հարձակումներ գործող, ուժեղ և համարձակ հսկա հերոսի մասին հյուսված մեգրեղական լեգենդում⁴⁹:

К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ Г. ТЕГАРАМА (ТОГАРМА)

КАРАГЕЗЯН А. А.

Резюме

Город Тегарам, который упоминается в хеттских источниках и отождествляется с библейской Тогарамой, обычно локализуется исследователями на правом берегу Верхнего Евфрата, на месте современного Горуна (к западу от Малатии). Согласно новой интерпретации, г. Тегарам находился к северу от Малатии, в районе устья р. Караминон – правобережного притока р. Евфрат. Топоним **Ter/Tog Arama* означает “род, дом или страна Арама”. Данные клинописных надписей свидетельствуют о наличии стран с названием Арам на подступах к Армянскому нагорью, на его четырех сторонах и в центральной части. Этимология топонимов Армавир (*род, племя Арама* или *дети Солнца*), Арамале (*территория проживания детей Солнца/привилегированной части воинского сословия*), Армази (дом Арама) указывает на то, что они являлись воеводствами страны Армани/ум, упоминавшейся в аккадских надписях второй половины III тыс. до н. э. Следовательно, восприятие армянского этноса средневековыми авторами в качестве племени Арамаян, Арамазнеа, Арамазеан имеет определенную историческую основу.

գիտական որևէ լուրջ կոմպանի, որոշ հետազոտողներ ջանում են հիմնավորել այդ ենթադրությունը՝ առնչություններ որոնելով բասկերենի և վրացերենի միջև» (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, Ե., 1978, էջ 306):

⁴⁸ Strabon. География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского, под общей редакцией проф. Утченко С. Л., редактор перевода Крюгер О. О., М., 1964, XI, III, 3.

⁴⁹ Ղափանցյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 96: Ենթադրվում է, որ Քաջ Արամն անձնավորում է ուրարտական Arame թագավորին, որի քաջագործությունների շուրջ ստեղծված գրույցներն անցել են Սև ծովի ափերին բնակվող ցեղերին և փոփոխվել ըստ պատմական իրադրության՝ կապվելով քրիստոնեական շրջանի և շրջակա ժողովուրդների (ալան, չերքեզ, աբխազ) հետ, հիմնականում պահպանելով անունները (Ղափանցյան Գ. Ա. ն, նշվ. աշխ., էջ 97):